Սուլթան Սէլիմ տիրեց Հայաստանի մեծ մասի վրայ, սկսած Թավրէզ քաղաքից մինչեւ կարին, բայց Շահ Իսմայէլի որդի Շահ Թահմազը 1550 թուին յետ առաւ, գրաւեց Վան քաղաքը, ասպատակեց Արարատեան աշխարհը, հասաւ մինչեւ Բարձր Հայք, աւերեց Երզրումի երկիրը մինչեւ Երզնկայ, եւ շատ Հայեր ի գերութիւն վարեց: Բոլոր Հայաստանը հեծում էր այդ բռնակալի տիրապետութեան ներքոյ: Նրա մահից յետոյ Օսմանցւոց սուլթան Մուրատը մեծ զօրքով խաղաց դարձեալ Հայաստան, յետ կորզեց բոլոր երկիրները, ինչպէս եւ Երեւան, Նախիջեւան, Թավրէզ. եւ այդ վերջին տեղերից 60 հազար Հայ եւ Պարսիկ գերի վարեց Ցուեաստանի կողմերը: Աւելի սարսափելի եւ աղետալի եղաւ 1579ի պատերազմը, երբ Օսման փաշա զօրապետն ասպատակեց Աղուանից երկիրը՝ Շիրուան, առաւ Շամախի, Գանձակ, Պարտաւ, Զարաբերդ, Խաչէն, Վարանդա, Դիզակ գաւառները եւ բազմաթիւ Հայերին սրով խողխողեց: Պարսից Շահը՝ Խուդաբէնդ հղիմանալով՝ փախաւ Խորասան եւ երբ թագաւորեց 1586 թուին նրա որդի Աբասը, կամ Շահաբբաս Առաջինը, աճապարեց Օսմանցւոց Սուլթան Մուրատի հետ հաշտութիւն անել, պատանդ տալով: Այդպիսով երկու տէրութիւնների մէջ խաղաղութիւն հաստատուեց, գոնէ առ ժամանակ, եւ այդ հաշտութեան զօրութեամբ, բոլոր գրաւուած երկիրները մնացին Օսմանցւոց ձեռքում, այնպէս որ Հայաստան